

**ՄԱԿ ՓԳՀ դիտարկումները «Օտարերկրացիների մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և
լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի վերաբերյալ**

Ներածություն

2019 թվականի հունիսի 6-ին Հայաստանի Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչությունը տեղեկացավ, որ «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ «Օտարերկրացիների մասին» օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից և ուղարկվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր փորձագիտական կարծիքը այս փոփոխությունների մշակման գործընթացի նախորդ փուլերում: Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն ուրախ է այս պահին ներկայացնելու հետևյալ դիտարկումները, որոնց նպատակն է ամրապնդել առաջարկվող փոփոխությունների՝ ապաստանին առնչվող երաշխիքներն ու սկզբունքները՝ նկատառումով, որ դրանք կդիտարկվեն բոլոր համապատասխան կառավարական դերակատարների կողմից և քննարկումների ու խորհրդակցությունների առարկա կդառնան Ազգային ժողովում:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է այս դիտարկումները որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից փախստականներին և իր մանդատի ներքո գտնվող այլ անձանց միջազգային պաշտպանություն տրամադրելու, ինչպես նաև փախստականների խնդրի հարատև լուծումներ գտնելու հարցում կառավարություններին օժանդակելու լիազորությամբ օժտված գործակալություն: Ինչպես սահմանված է իր Կանոնադրության մեջ, ՄԱԿ ՓԳՀ-ն իրականացնում է միջազգային պաշտպանության իր լիազորությունը, այդ թվում, *«փախստականների պաշտպանությանն ուղղված միջազգային կոնվենցիաների կնքման և վավերացման, դրանց կիրառումը վերահսկելու և դրանցում փոփոխություններ առաջարկելու միջոցով»:* ՄԱԿ ՓԳՀ-ի՝ իր Կանոնադրությամբ սահմանված վերահսկողական լիազորությունը վերահաստատված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիայի (այսուհետ՝ 1951թ. կոնվենցիա) 35-րդ հոդվածում, համաձայն որի՝ մասնակից պետությունները հանձն են առնում *«համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ [...] վերջինիս գործառույթների իրականացման հարցում և պետք է, մասնավորապես, հեշտացնեն Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա*

պարտականությունը»: Նմանատիպ դրույթ ներառված է Փախստականների կարգավիճակին վերաբերյալ 1967թ. Արձանագրության II-րդ հոդվածում:

Այսպիսով՝ ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և այս օրենսդրական գործընթացի համատեքստում հետագա խորհրդակցությունների համար հասանելիությունը հիմնված են այս միջազգային փաստաթղթերի վրա: Ավելին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 81-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները պահանջում են Սահմանադրությունում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթները մեկնաբանելիս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Ինչպես ներկայացված է վերը, ՄԱԿ ՓԳՀ-ն ունի Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասում նշված իրավական կարգավիճակին շատ նման կարգավիճակ և, որպես այդպիսին, ակնկալում է արժանանալ համանման մոտեցման¹:

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն – Հոդված 81. Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային պրակտիկան.
«1. Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.president.am/en/constitution-2015/>:

Ընդհանուր նկատառումներ

ՄԱԿ ՓԳՀ-ն գովելի է համարում Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ազգային միգրացիոն և ապաստանի համակարգերի ամրապնդմանն ուղղված շարունակական ջանքերը և գիտակցում է առաջարկվող փոփոխությունների կարևորությունը օտարերկրացիների մուտքը Հայաստան և Հայաստանից նրանց արտաքսումը կարգավորելու հարցում: ՄԱԿ ՓԳՀ-ն նաև ողջունում է այն փաստը, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի առաջարկվող փոփոխությունների մշակման գործընթացում հաշվի են առնվել փախստականներին առնչվող միջազգային իրավական նորմերի վրա հիմնված որոշ երաշխիքներ: Այդ առումով ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է որոշ դիտարկումներ ներկայացնել, որոնց նպատակն է էլ ավելի ամրապնդել նշված երաշխիքները միջազգային պաշտպանություն հայցող կամ միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց համար և հստակեցնել որոշ դրույթներ «Օտարերկրացիների մասին» օրենքը միջազգային չափանիշներին ավելի մոտարկելու նպատակով:

Կոնկրետ դիտարկումներ

1. «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունները

«Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությամբ հիմքեր են նախատեսվում մուտքի վիզան մերժելու կամ ուժը կորցրած ճանաչելու կամ այլապես օտարերկրացու մուտքը Հայաստանի Հանրապետությունն արգելելու համար հետևյալ կերպ.

«[...]2. Օտարերկրացուն մուտքի վիզայի տրամադրումը (ժամկետի երկարաձգումը) մերժվում է, տրամադրված մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվում կամ մուտքը Հայաստանի Հանրապետությունն արգելվում է, եթե նա օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման Հայաստանի Հանրապետությունում հանցագործություն կատարելու համար:

Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառում լիազորված պետական մարմինը օտարերկրացու ազատազրկման դատապարտման մասին Հայաստանի Հանրապետության դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական մարմնին սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով արտաքսման վերաբերյալ գործ հարուցելու համար:

Օրինական ուժի մեջ մտած դատավճռով օտարերկրացու ազատազրկման դատապարտվելու պատճառով արտաքսման մասին որոշում կայացնելու դեպքում օտարերկրացու մուտքը Հայաստանի Հանրապետությունն արգելվում է, եթե օրինական ուժի մեջ մտած արտաքսման մասին որոշումն ի կատար ածելուց հետո չի անցել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարելու դեպքում՝

երեք տարի, ծանր հանցագործություն կատարելու դեպքում՝ հինգ տարի, իսկ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու դեպքում՝ ութ տարի:

Սույն մասի դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվող մերձավոր ազգականներ (ամուսին, զավակ, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ունեցող անձանց վրա»:

ՄԱԿ ՓԳՀ-ն նկատում է, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերությունում պահպանվել են բացառությունները Հայաստանում ամուր ընտանեկան կապեր ունեցող օտարերկրացիների համար, որի նպատակն է երաշխավորել նրանց մասնավոր և ընտանեկան կյանքի իրավունքի նկատմամբ հարգանքը²: ՄԱԿ ՓԳՀ-ն ենթադրում է, որ այս դրույթը հավասարապես կիրառվելու է այն ապաստան հայցողների և ճանաչված փախստականների նկատմամբ, ովքեր ունեն Հայաստանի Հանրապետությունում օրինական կերպով բնակվող մերձավոր ազգականներ:

ՄԱԿ ՓԳՀ-ի պատկերացումն այն է, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունը նվազեցնում է հանցագործությունների ծանրության աստիճանը, որոնք կարող են ազդել օտարերկրացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտքի կամ Հայաստանի Հանրապետությունում կացության վրա: Ըստ այս փոփոխության՝ «հանցագործությունները», այլ ոչ այլևս «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունները» (ըստ գործող ձևակերպման) կարող են հանգեցնել մուտքի թույլտվության մերժման կամ Հայաստանում օտարերկրացիների կացության դադարեցման: Նման փոփոխությունները գտնվում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքի ներքո, երբ խոսքը վերաբերում է այն օտարերկրացիներին, որոնց վրա չի տարածվում ապաստան հայցողների և փախստականների մուտքի, կացության և արտաքսման հատուկ իրավական ռեժիմը: Վերջիններս, նույնիսկ եթե նրանց վրա չտարածվի առաջարկվող 8-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերությունը, պաշտպանված են չվերադարձելիության սկզբունքով և դրա բացառություններով՝ նախատեսված «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածով³: Ուստի

² Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հոդված 16, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի հոդված 23, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 10, Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների մասին կոնվենցիայի հոդված 44 և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի հոդված 8:

³ Հայաստան. «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի թիվ 20-211-Ն օրենք (2015) [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/4f1986412.html> .:

Հոդված 9. Չվերադարձելիությունը

1. Չվերադարձելիության սկզբունքը, սույն օրենքի և միջազգային իրավունքի համաձայն, փախստականին որևէ կերպ չվերադարձնելն է այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով:
2. Ապաստան հայցող անձը մինչև սույն օրենքի 47-րդ հոդվածի համաձայն իր ներկայացրած՝ ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը չի կարող արտաքսվել Հայաստանի Հանրապետության տարածքից:

կարևոր է, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի նախագծի առաջարկվող դրույթները ուղղակիորեն հղում կատարեն «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի («Փախստականների և ապաստանի մասին» օրենք)⁴ 9-րդ հոդվածին, քանի որ նման հղման բացակայությունը կարող է հանգեցնել թյուրընթացությունների և պրակտիկայի, որը կարող է հակասել «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ի արտացոլումն 1951 թ. կոնվենցիայի 33-րդ հոդվածի ամրագրված չվերադարձելիության սկզբունքին, ինչպես նաև վերադարձից պաշտպանություն նախատեսող մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերին, այդ թվում՝ Խոշտանգումների և այլ դաժան, աննմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի հոդված 3-ի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի հոդված 3-ի դրույթներին:

Նույն մտահոգությունը վերաբերում է «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին (որում փոփոխություն չի նախատեսվում), քանի որ այն պարունակում է Հայաստան մուտքը արգելող հիմքերի ցանկ՝ առանց նշելու ապաստան հայցողների, փախստականների և «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածի դրույթներից օգտվող այլ անձանց մուտքի, կացության և արտաքսման հատուկ ռեժիմի մասին:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է «Օտարերկրացիների մասին» օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը չեն տարածվում ապաստան հայցողների, փախստականների և այլ անձանց նկատմամբ, որոնց վրա տարածվում են «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի դրույթները»:

2. «Օտարերկրացիների մասին» օրենքի 30-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները

ՄԱԿ ՓԳՀ-ն որևէ դիտարկում չունի «Օտարերկրացիների մասին» օրենքի 30-րդ հոդվածի «բ» կետում առաջարկվող փոփոխության վերաբերյալ, որն է.

3. Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նա կենթարկվի դաժան և աննմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների:

⁴ Հայաստան. «Փախստականների և ապաստանի մասին» 2008 թվականի թիվ ՀՕ-211-Ն օրենք (2015) [Հայաստան], 27 նոյեմբերի 2008թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/docid/4f1986412.html>.



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

«Օտարերկրացին պարտավոր է կամավոր հեռանալ Հայաստանի Հանրապետության տարածքից, եթե՝

[..](բ) [«մուտքի վիզան ուժը կորցրած է ճանաչվել ...ում նշված հիմքերով»-ի փոխարեն]

Առկա են սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում նշված հիմքերը:

Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է ուշադրություն հրավիրել օտարերկրացու կամավոր հեռանալու ժամկետի բացակայության վրա, ով կամավոր չհեռանալու դեպքում ենթակա կլինի արտաքսման:

Քանի որ կամավոր հեռանալու հարցը կարող է նաև կարևոր լինել փախստականների համար, ում ապաստանի կարգավիճակը հետ է վերցվել (անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվել կամ դադարեցվել), ինչպես նաև մերժում ստացած ապաստան հայցողների կամավոր վերադարձի համատեքստում, ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է առաջարկել ներմուծել կամավոր հեռանալու ողջամիտ ժամկետ, ինչը կհեշտացնի այս դրույթի իրականացումը և թույլ կտա խուսափել հարցից, թե երբ կարող է/պետք է սկսվի «Օտարերկրացիների մասին» օրենքի 31-րդ հոդվածով նախատեսված արտաքսման գործընթացը:

Չնայած առկա չէ որևէ կոնկրետ միջազգային չափանիշ, որը հաստատում կամ սահմանում է, թե որն է ողջամիտ ժամկետը այս համատեքստում, օգտակար կլինի որպես նման ժամկետ սահմանել 30-ից 90 օրը՝ հաշվի առնելով առկա հաջողված փորձը:

Նպատակահարմար է նաև նախատեսել կամավոր հեռանալու ժամկետի երկարաձգում ճամփորդական փաստաթուղթ ձեռք բերելու հետ կապված դժվարություններ առաջ գալու, օտարերկրացու կամ նրա ընտանիքի անդամների անսպասելի հիվանդության դեպքում, կամ եթե անհրաժեշտ է թույլ տալ, որ դպրոցական տարին ավարտվի երեխաներ ունեցող ընտանիքների դեպքում, ինչպես նաև օտարերկրացու վերահսկողությունից դուրս գտնվող այլ հիմնավոր պատճառների կամ հանգամանքների պարագայում:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է նախատեսել կամավոր հեռանալու ողջամիտ ժամկետ՝ խնդրո առարկա օտարերկրացու վերահսկողությունից դուրս գտնվող հիմնավոր պատճառի և հանգամանքների դեպքում երկարաձգման հնարավորությամբ:

3. «Օտարերկրացիների մասին» օրենքի 36-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

«Օտարերկրացիների մասին» օրենքի 36-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունը նախատեսում է նոր՝ 2.3 պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«[.]2.3. Այն դեպքերում, երբ օտարերկրացին սահմանված կարգով ապաստանի հայց է ներկայացնում լիազոր մարմին, ապա սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքով կայացված արտաքսման որոշումն ի կատար է ածվում նրա հայցի վերաբերյալ վերջնական մերժման որոշումն ընդունվելուց հետո՝ ներառյալ դատական կարգով բողոքարկումը»:

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է այս կարևոր երաշխիքը ապաստան հայցող անձանց համար: Փախստականների մասին 1951թ. կոնվենցիայով նախատեսված չվերադարձելիության սկզբունքի հիման վրա և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ)⁵ կայացրած որոշումների համաձայն՝ խիստ կարևոր է նախատեսել և օրենքում ու պրակտիկայում երաշխավորել, որ արտաքսման մասին որոշումը ինքնաբերաբար կասեցվի, եթե օտարերկրացին դիմում է փախստականի կարգավիճակի համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է, որ այս դրույթը տարածվի նաև այն իրավիճակների վրա, երբ օտարերկրացին ապաստանի դիմում է ներկայացնում այն բանից հետո, երբ այլ հիմքերով պայմանավորված իր կացության իրավունքը չեղարկվում է «Օտարերկրացիների մասին» օրենքի 21-րդ հոդվածով⁶ նախատեսված պատճառներով, և հնարավոր է, որ նրան սպառնա հարկադիր վերադարձ՝ համաձայն «Օտարերկրացիների մասին» օրենքի 30-րդ հոդվածի [հոդված 31-ի հետ համադրությամբ] դրույթների:

Բացի այդ, 36-րդ հոդվածով պետք է հստակեցվի, որ եթե ապաստանի տրամադրման ընթացակարգի արդյունքում անձը ճանաչվում է որպես փախստական, արտաքսման մասին որոշումները, որոնք ընդունվել են նախքան ապաստանի տրամադրման գործընթացը կամ դրա ընթացքում, ինքնաբերաբար կորցնելու են իրենց ուժը: Փոխարենը, եթե անձը ճանաչվում է որպես փախստական, սակայն նախքան ապաստանի տրամադրման ընթացակարգը կամ դրա ընթացքում համապատասխան մարմինները հաստատել են, որ առկա են 1951 թվականի կոնվենցիայի հոդվածներ 32⁷-ի և 33⁸-ի չվերադարձելիության սկզբունքի

⁵ Ջարբրին ընդդեմ Թուրքիայի, Դիմում թիվ 40035/98, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 11 հուլիսի 2000թ., պարբ. 50, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases,ECHR.3ae6b6dac.html>; Ջերբենդեհին [Ջարբրամարիին] ընդդեմ Ֆրանսիայի, 25389/05, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 26 ապրիլի 2007թ., պարբ. 66, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases,ECHR.46441fa02.html>:

⁶ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը՝ «Կացության կարգավիճակ տալու վերաբերյալ որոշումն ուժը կորցրած ճանաչելու, կացության կարգավիճակը երկարաձգելու վերաբերյալ դիմումը մերժելու հիմքերը, կացության կարգավիճակից զրկելու հետևանքները և կացության կարգավիճակից զրկելու բողոքարկումը»:

⁷ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի հոդված 32-ը սահմանում է.
«1. Պայմանավորվող պետությունները չեն վտարում իրենց տարածքում օրինական կարգով գտնվող փախստականին, բացի ազգային անվտանգությամբ կամ հասարակական կարգի պահպանությամբ պայմանավորված դեպքերից:



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

բացառությունների (արտացոլված «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում) շրջանակում ընդգրկված հանգամանքներ, փախստական ճանաչված անձին արտաքսելու մասին որոշում կարող է կայացվել միայն արտաքսման հատուկ հիմքերին և վերոնշյալ դրույթներում սահմանված երաշխիքներին համապատասխան կատարված առանձին գնահատման արդյունքում⁹:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է «Օտարերկրացիների մասին» օրենքի 36-րդ հոդվածում առաջարկվող 2.3 մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«[.]2.3. Եթե օտարերկրացին սահմանված կարգով ապաստանի հայց է ներկայացնում լիազոր մարմնին, արտաքսման մասին որոշումը օրենքի ուժով կասեցվում է և ի կատար է ածվում միայն նրա ապաստանի դիմումի վերաբերյալ վերջնական բացասական որոշում կայացվելուց հետո, ներառյալ՝ դատարանում բողոքարկման գործընթացը: Փախստական ճանաչվելու դեպքում արտաքսման վերաբերյալ նախկինում կայացված որոշումը օրենքի ուժով ուժը կորցրած է ճանաչվում»:

4. ՄԱԿ ՓԳՀ-ի լրացուցիչ առաջարկությունները «Օտարերկրացիների մասին» օրենքում հնարավոր փոփոխությունների վերաբերյալ

ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է անել ևս երկու առաջարկություն, որոնք կենտրոնանում են, մասնավորապես, արտաքսման ընթացակարգերի երկու կարևոր երաշխիքների վրա և բխում են ՄԱԿ ՓԳՀ-ի՝ համապատասխան դրույթների գործնական կիրառության մշտադիտարկման փորձից.

2. Նման փախստականի վտարումը կատարվում է միայն օրենքին համապատասխան ընդունված որոշման հիման վրա: Բացի այն դեպքերից, երբ ազգային անվտանգության անհաղթահարելի հիմնավորումներն այլ բան են պահանջում, փախստականին թույլատրվում է ի արդարացումն իրեն ներկայացնել ապացույց և բողոքարկել իրավասու իշխանությանը կամ իրավասու իշխանության կողմից հատուկ նշանակված անձին կամ անձանց և այդ նպատակով ներկայացվել նրանց առջև:

3. Պայմանավորվող պետությունները նման փախստականին բավարար ժամանակ են տալիս՝ այդ ընթացքում ստանալու օրինական կարգով մեկ այլ երկիր մուտք գործելու թույլտվություն: Պայմանավորվող պետություններին իրավունք է վերապահվում այդ ընթացքում կիրառել այնպիսի ներքին միջոցառումներ, որ նրանք անհրաժեշտ կհամարեն»:

⁹ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի հոդված 33-ը սահմանում է.

«1. Պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չի վտարում կամ որևէ կերպ վերադարձնում («վերադարձնում այն երկիր, որտեղից եկել է») այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար իր ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու կամ քաղաքական կարծիքի հարելու հիմքով:

2. Սույն դրույթի արտոնությունը, սակայն, չի կարող վկայակոչվել այն փախստականի կողմից, ով հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում իր գտնված երկրի անվտանգության համար, կամ ով, վերջնական դատավճռով դատապարտված լինելով բացառիկ լուրջ հանցագործության համար՝ վտանգ է ներկայացնում այդ երկրի հասարակության համար»:

⁹ See E. Lauterpacht and D. Bethlehem, “The scope and content of the principle of non-refoulement: Opinion”, in E. Feller, V. Türk and F. Nicholson (eds.), *Refugee Protection in International Law: UNHCR’s Global Consultations on International Protection*, Cambridge University Press, Cambridge (2003), paras 158-159, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://www.unhcr.org/refworld/docid/470a33af0.html> (այսուհետ՝ E. Lauterpacht and D. Bethlehem):

- **Անվճար որակյալ թարգմանչական ծառայությունների, ինչպես նաև իրավաբանական օգնության և ներկայացուցչության հասանելիությունը**

ՄԱԿ ՓԳՀ-ն խիստ կարևոր է համարում «Օտարերկրացիների մասին» օրենքում այնպիսի դրույթի ներառումը, որը կերաշխավորի արտաքսման գործընթացի բոլոր փուլերում անվճար և որակավորված իրավաբանական աջակցության, ինչպես նաև թարգմանության իրավունքը: Համաձայն ՄԻԵԴ նախադեպային իրավունքի՝ թարգմանության և իրավաբանական աջակցության բացակայությունը խոչընդոտում է վերադարձվելու վտանգի դեմ պաշտպանության միջոցի արդյունավետությունը¹⁰: Այս ծառայությունները կարևոր ընթացակարգային երաշխիքներ են, որոնք ապահովում են արդարադատության արդյունավետ հասանելիություն և պետք է առկա լինեն օրենքում և պրակտիկայում:

Թարգմանությունը կարևոր է համապատասխան մարմինների կողմից փաստերի և ապացույցների ճշգրիտ հավաքագրման և հաստատման համար: Յուրաքանչյուր ոք, ով ենթակա է արտաքսման ընթացակարգերին, իրավունք ունի հստակորեն և ժամանակին տեղեկացվելու արտաքսման պատճառների մասին, արդյունավետ կերպով ներկայացնելու ապացույցներ և փաստաթղթեր արտաքսման դեմ՝ իրեն հասկանալի լեզվով¹¹:

Պետք է առկա լինի անվճար իրավաբանական աջակցություն և ներկայացուցչություն այն դեպքերում, երբ անձը չունի բավարար միջոցներ այդ ծառայությունների դիմաց վճարելու համար: Իրավաբանական աջակցությունը պետք է լինի որակավորված և հասանելի¹²:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է «Օտարերկրացիների մասին» օրենքի 32-րդ հոդվածը լրացնել նոր մասով, որով կերաշխավորվի անվճար թարգմանության, ինչպես նաև իրավաբանական աջակցության ու ներկայացուցչության տրամադրումը արտաքսման գործընթացի բոլոր փուլերում:

- **Ապացուցման բեռը արտաքսման ընթացակարգերում**

¹⁰ *Ի.Մ. ընդդեմ Ֆրանսիայի, դիմում թիվ 9152/09*, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրաունքների եվրոպական դատարան, 2 փետրվարի 2012թ., պարբ. 145, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases/ECHR.4f2932442.html>; *Մ.Ս.Ս. ընդդեմ Բելգիայի և Հունաստանի, դիմում թիվ 30696/09*, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 21 հունվարի 2011թ., պարբ. 301 և 304, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases/ECHR.4d39bc7f2.html>; *Հիրսի Ջամաան և մյուսներն ընդդեմ Իտալիայի, դիմում թիվ 27765/09*, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 23 փետրվարի 2012թ., պարբ. 201-204, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases/ECHR.4f4507942.html>.

¹¹ Նույն տեղում 13; Եվրոպայի խորհուրդ, *Քսան ուղեցույց հարկադիր վերադարձի մասին*, սեպտեմբեր 2005թ., Ուղեցույց 4.1, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/t/dg3/migration/archives/Source/MalagaRegConf/20_Guidelines_Forced_Return_en.pdf.

¹² Եվրոպայի խորհուրդ, *Քսան ուղեցույց հարկադիր վերադարձի մասին*, սեպտեմբեր 2005թ., Ուղեցույց 5.2, հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/t/dg3/migration/archives/Source/MalagaRegConf/20_Guidelines_Forced_Return_en.pdf.

«Օտարերկրացիների մասին» օրենքի 32-րդ հոդված 1-ին մասը պահանջում է, որպեսզի արտաքսման ենթակա օտարերկրացին ներկայացնի ապացույցներ հետապնդման սպառնալիքի կամ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ մահապատժի իրական վտանգի գոյության մասին: Ուստի ապացուցման բեռը դրված է բացառապես խնդրո առարկա օտարերկրացու վրա:

Ապացուցման ինստիտուտի ընդհանուր իրավական սկզբունքների համաձայն՝ ապացուցման բեռը իսկապես կրում է այն անձը, ով անում է պնդումը: Այդուհանդերձ, միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձը կարող է հաճախ ի վիճակի չլինել հիմնավորելու իր պնդումները փաստաթղթային կամ այլ ապացույցներով: Բացի այդ, չի կարելի ակնկալել, որ նա կդիմի իր ծագման երկրի իշխանություններին համապատասխան փաստաթղթեր ստանալու նպատակով, ինչպես արտացոլված է Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայի հոդված 25-ում՝ որպես ընդհանուր սկզբունք: Հաշվի առնելով այս իրավիճակի առանձնահատկությունները՝ որոշում կայացնողը կհստում է բոլոր համապատասխան փաստերը հաստատելու և գնահատելու պարտականությունը և պետք է օգտագործի տրամադրության տակ եղած բոլոր միջոցները, որպեսզի ձեռք բերի որոշումը հիմնավորող բոլոր անհրաժեշտ ապացույցները: Մրան կարելի է հասնել համապատասխան ծագման երկրում տիրող օբյեկտիվ իրավիճակին ծանոթանալու, համապատասխան տեղեկություններ տրամադրելու հարցում արտաքսման ենթակա անձին ուղղորդելու և բավարար կերպով ենթադրյալ փաստերը ստուգելու միջոցով, որոնք կարող են հիմնավորվել: Ինչևէ, նմանատիպ անկախ ուսումնասիրությունը ոչ միշտ կարող է հաջողությամբ պսակվել, և կարող են նաև լինել պնդումներ, որոնք ենթակա չեն ապացուցման: Նման դեպքերում, եթե անհատի պատմածը արժանահավատ է թվում, ապա կասկածները պետք է մեկնաբանվեն հոգուտ նրա, եթե առկա չեն հակառակի մասին վկայող հիմնավոր պատճառներ¹³:

Ճանաչված փախստականների դեպքում կարևոր է արտաքսման մասին որոշում կայացնել՝ խորհրդակցելով և համագործակցելով ապաստանի բնագավառում լիազորված մարմնի հետ (ներկայումս՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայություն), որը պատասխանատու է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի համաձայն փախստականի կարգավիճակի որոշման համար: Կարևոր է արձանագրել, որ Միգրացիոն ծառայության կողմից ապաստանի ճանաչման որոշումը չի կարող որպես այդպիսին հարցականի տակ դրվել արտաքսման ընթացակարգի շրջանակներում:

¹³ UN High Commissioner for Refugees (UNHCR), *Handbook on Procedures and Criteria for Determining Refugee Status and Guidelines on International Protection Under the 1951 Convention and the 1967 Protocol Relating to the Status of Refugees*, April 2019, HCR/1P/4/ENG/REV. 4, para 195-205, available at: <https://www.refworld.org/docid/5cb474b27.html>; UN High Commissioner for Refugees (UNHCR), *Note on Burden and Standard of Proof in Refugee Claims*, 16 December 1998, available at: <https://www.refworld.org/docid/3ae6b3338.html>.



UNHCR

United Nations High Commissioner for Refugees
Haut Commissariat des Nations Unies pour les réfugiés

ՄԱԿ ՓԳՀ-ն նաև ցանկանում է հիշատակել ՄԻԵԴ նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ ՄԻԵԿ 2-րդ և 3-րդ հոդվածներին առնչվող դեպքերում պետությունները պարտավոր են սեփական նախաձեռնությամբ իրականացնել ռիսկի գնահատում, երբ բազմաթիվ աղբյուրներից հնարավոր է հաստատել կյանքին վտանգ սպառնացող իրավիճակի մասին տեղեկատվությունը, կամ երբ պետական մարմինները տեղյակ են փաստերից, որոնք կարող են կոնկրետ անձի ենթարկել վատ վերաբերմունքի ռիսկի՝ համաձայն վերոնշյալ դրույթների¹⁴: Այդ դեպքերում ապացուցման բեռը կիսվում է:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է «Օտարերկրացիների մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում արտացոլել ապացուցման բեռը կիսելու սկզբունքը՝ արտաքսման և հարկադիր վերադարձի դեպքում վատ վերաբերմունքի կամ այլ վնասի ռիսկի անհրաժեշտ գնահատման համատեքստում:

ՄԱԿ ՓԳՀ, 30 սեպտեմբերի 2019թ.

¹⁴ Հիրսի Ջամանան և մյուսները ընդդեմ Իտալիայի, դիմում թիվ 27765/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 23 փետրվարի 2012թ., պարբ. 131-133, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases.ECHR.4f4507942.html>; Մ.Ս.Ս. ընդդեմ Բելգիայի և Հունաստանի, դիմում թիվ 30696/09, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 21 հուլիսի 2011թ., պարբ. 366, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases.ECHR.4d39bc7f2.html>; Ֆ.Գ. ընդդեմ Շվեդիայի, դիմում թիվ 43611/11, Եվրոպայի խորհուրդ. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 23 մարտի 2016թ., պարբ. 125-127, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.refworld.org/cases.ECHR.56fd485a4.html>.